

Ս. ԱԹՈՒՌՈՅՍ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Նկատի ունենալով որ Ս. Յակոբեանց Առաքելական Ուխտի Միաբանությունը անցեալ տարի Հոկտեմբերի 13ին, իր Պատկառելի Միաբանական Ընդհ. Ժողովոյ ընթացքին անվասանութեան ֆուէ առաջարկած էր, Լուսարարապետ Տ. Նդիեւ Արեւա. Տեղեւանի գործունէութեան, եւ դադրեցուցած էր զայն յիշեալ պատճօնէն, Ս. Արթուրոյ այս շատ կարեւոր պատճօնը բաժուր կը մնար:

Պատրիարքական ընտրութենէն ետք, ձեռնարկուեցաւ լուսարարապետի ընտրութեան 1957 Մարտի 25ին:

Ժողովի հրաւիրուած 22 Գերաւեմորհ եւ Հոգեւեմորհ անդամները Բե. օրը յետ միջօրեի ժամը 4ին, պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ ներկայ էին: Փազսնի ֆուէարկութեամբ ընտրուեցաւ Գերաւեմորհ Տ. Շնորհ Եպս. Գալուստեան, նախկին առաջնորդը Ամերիկայի Արեւմտեան թեմի հայոց (Փալիթօրնիա):

Ընտրութենէն անմիջապէս ետք նորընտիր լուսարարապետ Սրբազան Հայրը խօսք առնելով ի միջի այլոց ըսաւ թէ խորապէս ըզգացուած է Միաբանութեան իրեն հանդէպ ունեցած վասնութենէն, եւ շնորհակալութիւն յայտնելով հանդերձ, ըսաւ որ թեւ շատ ծանր կը զսնէ այս պատճօնը բայց Աստուծոյ օգնութեամբ եւ ուխտակից եղբայրներու օժանդակութեամբ իր կարելին պիտի ընէ կանոնաւոր կերպով կատարելու իրեն վստահուած այս լուրջ պատասխանատուութիւնը:

Անմիջապէս ետք, Մայր Տանարի մեծ զանգը աւետեց ընտրութիւնը: Ապա՝ ժողովականները գլխաւորութեամբ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր՝ իջան եկեղեցի ուր արդէն ժողովուրդի բազմութիւն մը հաւաքուած էր: Մայր Տանարի մուտքին երգուեցաւ «Որ էնն Կուրեան» շարականը: Սուրբ Գլխադրի մատան մէջ լուսարարապետ Սրբազանը ձեռնադիր եւ գլխաբաց կարգաց իր Ուխտը հաւատարիմ մնալու Ս. Արթուրոյ կանոններուն եւ աւանդական սովորութիւններուն անքերի գործադրութեան: Պատրիարք Սրբազան Հայրը «Պահպանիչ»ով օրհնեց զինքը: Ու ինք Ս. Գլխադրի սրբավայրին մէջ ընդունեց Ս. Մինասի մատան բանալին: Այս մատուռը նախագաւիթն է Ս. Արթուրոյ զանազան: Նորընտիր լուսարարապետը իր իսկ ձեռնով բացաւ մատուռը եւ հոն ընդունեց ամբողջ Միաբանութեան շնորհաւորութիւններն ու բարեմաղորութիւնները:

Լուսարարապետութիւնը Ս. Ուխտի Միաբանութեան մէջ պատրիարքէն ետք, կարեւորագոյն պատճօնն է: Լուսարարապետը ցկեանս կը պատճօնավարէ եւ կը հսկէ Ս. Արթուրոյ հովանիին ներքեւ եղող բոլոր եկեղեցիներու անօրներուն, զարդերուն, գոյներուն անկորուստ եւ անվնաս պահպանութեան: Իր պատճօնն է տեսակ մը ներքին վանահայրութիւն որ անձանձիր կերպով կը հսկէ եկեղեցւոյ մէջ կարգապահութեան եւ պատճառակցի անքերի եւ վայելուչ կատարման, ինչպէս նաեւ վանական կանոնապահութեան: Լուսարարապետը՝ Սրբազան Պատրիարքին հետ ցկեանս անդամ է Ս. Արթուրոյ վարչական ժողովին, որ գործադիր եւ տնօրինող մարմինն է բոլոր վարչական գործերուն:

Գեր. Տ. Շնորհ Եպս. Գալուստեան ծնած է 1913ին, Իյեք (Նազլաս - Կեսարիա): Ապագան անունն է Արշակ: Զաւակն է իրենց զիւրի հարուստ եւ ազդեցիկ ընտանիքներէն մեկուն: Հայրը եւ հօրեղբայրները մինչեւ վերջ ապրած են ճոյն երդիքին տակ, պահելով նահապետական ընտանիքի մը բոլոր բարի եւ բարձր յատկանիւնները: Հայրն ու հօրեղբայրները, եւ գերզատանի միւս անդամները, շուրջ 35 հոգի, նահատակուած են 1915ին: Միայն ինք՝ մայրը, հոյրն ու եղբայրը հրաժարուած ազատեցան եւ մեծ եղեռնէն:

Մանկութեան տարիները անցուցած է Նազարէթի Ամերիկեան որբանոցին մէջ յորձեհեց 1927 Յուլիս 14ին կը մտնէ Նուսադեմի Ժառանգաւորաց վարժարանը եւ կարճ ժամանակի մէջ ուսուցում կը դառնայ իր ուսումնական մասին աւելի աստիճանականութեամբ:

Վարժարանին ընթացքը յաջողութեամբ աւարտելէ ետք 1932ին կը ձեռնադրուի Աւագ Սարկաւագ: Ընծայարանի եռամեայ շրջանն ալ աւարտելով 1935ին կը ձեռնադրուի կուսակրօն ֆահանայ, ձեռամբ Ամեն. Տ. Քորգով պատրիարքի, վերակոչուելով Տ. Շնորհ Արեւոյ:

Վարժած է զանազան պատճօններ, եղած է Գործադիր Տ. Քորգով պատրիարքի, սուրբիչ վանուցա Սրբոց Քարգանջաց վարժարանի, ապա 1936ին ներքին տեսուչ Ժառանգաւորաց վարժարանի: Կարճ պատճօ-

նավարութենէ մը ետք սակայն 1937ին նշանակուած է տնօրէն՝ Սրբոյ Գեորգիի Տղայի եւ փոխ խմբագիր Սէն պատեօսական ասօցիացիները :

Միշտ աշխատեց եւ գործունեայ, տարուէ տարուէ կը տեսնենք զինքը եկեղեցականութեւ գործունեութիւններու մէջ, անգամ՝ Տնօրէն Ժողովոյ, հոգեւոր հովիւ ՀայՖայի եւ Երզնկայից: 1941ին տնօրէն՝ Կիլիկիոյ կարողականութեան Արքեպիսոպոսի ղարեկցութիւն. պատեօս՝ զոր վարեց մինչեւ 1944ի ամառը: 1945ին կը նշանակուի հոգեւոր հովիւ Լոնտոնի հայոց: 1948ին կ'անցնի Ամերիկա որպէս հովիւ Փերքսըն եւ Նուարք քաղաքներու: Կը հրատարակէ Կոմիտաս անուանով կրօնական քերթիկ մը: 1950-1952 վարած է Ամերիկայի առաջնորդութեան պատեօսութեւր Հայաստանի նկատմամբ խմբագրութիւնը:

1952ին, Գեորգ Առաջնորդ Տ. Տիրան Արեւսպ.ի ձեռնամբ ստացած է Մայրաքաղաք վարդապետի աստիճան, եւ բնակուած է առաջնորդ Ամերիկայի Արեւմտեան քերթիկ: 1954ին Երեսփոխանական ժողովը զմահատելով իր արգիւնաւոր գործունեութիւնը, եպիսկոպոսական աստիճանի բարձրացման որոշում տուած է:

1955 Հոկտեմբերին ձեռնադրուած է եպիսկոպոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. կարողականէն էջմիածնի մէջ միաբանակից 4 եպիսկոպոսներու հետ: Գեորգ Տ. Տնօրէն կը զլրատուէր Գալիֆորնիոյ քերթիկ պատեօսականութիւնը յէջմիածնի:

Տիպար վանական մը, քաղցրաբարոյ եւ պարկեօս աշխատող մը, ամբաստի իր նկարագրին ու լուրջ կրօնաւորի իր խանդը Աստուծոյ ծառայելու, խոր ակնածանք եւ յարգանք կը ներշնչեն բոլոր զինքը նանչցողներուն:

Մբոց Յակոբեանց զինուորեալ Միաբանութիւնը, իրեն վասնելով լուսարարութեան պատեօսը, գործնականապէս արտայայտած եղաւ իր սերն ու յարգանքը ինչպէս նաեւ զմահատանքը, Հայց. եկեղեցւոյ 20ամեայ իր ծառայութեան համար:

Այս ուրախ առիթով, Սէն յանուն Ամեն. Պատրիարք Մբազան Հօր եւ ամբողջ Միաբանութեան շնորհակց կը շնորհակցուէր նորին լուսարարութեան Մբազանը եւ կը մաղթարեւոտ երկար տարիներ, Աստուծոյ Տան բարեւոք ծառայութեան մէջ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ԱԹՈՌՈՅ ԴԻՒԱՆԷՆ

Մեր նախորդ Հաղորդագրութեամբ Երուսաղէմի ղեպքերը բերած էինք այն կէտին հրա Տէրութեան Արքեպ.ի բացած դատը յետաձգուած էր Մարտ 10ին: Սոյն դատը տեսնուեցաւ իր օրին եւ Յորդանանու Սրբաբնութեան Բարձրագոյն Ատեանը իր վճիռը տուաւ Մարտ 17ին, առ այն թէ Ատեանը չէր կրնար ջնջել Ներքին Գործոց Նախարարին կողմէ եղած (Տիրան Արքեպ.ի) Տեղապահի ընտրութեան ճանաչումը, բանի որ Բարձրագոյն Ատեանի իրաւասութենէն դուրս կը մնար քննարկումը Տեղապահի ընտրութեան վերաբերեալ գործողութեանց:

Երբ Բարձրագոյն Ատեանի այս որոշումը հաղորդուեցաւ պատրիարքարան Մարտ 19ին, անմիջապէս ձեռնարկուեցաւ լրացնելու պատրիարքական ընտրութեան գործը, որ կէս մնացած էր Դեկտ. 20ին (1956) այս մասին դրուած արգելքին հետեւանքով: - Ընտրութիւնը տեղի ունեցաւ Մարտ 20ին, ինչպէս նկարագրուած է այլուր ՍԻՈՆի այս թիւին մէջ:

Ընտրութիւնը եւ յարակից եկեղեցական հանդիսութիւնները վերջացած էին երբ նորընտիր պատրիարքը Երուսաղէմի կառավարիչէն զրկուած նամակէ մը տեղեկացաւ որ Տէրութեան Արքեպ. կրկին դատ բացած էր այս անգամ Երուսաղէմի շրջանային դատարանի մէջ, եւ նոր հրահանգ հանել տուած էր ընտրութիւնը կասեցնելու: Սակայն ընտրութիւնը աւելի քան երեք քառորդ ժամ առաջ աւարտած ըլլալով՝ հանուած հրահանգը չի ծառայեց իր նպատակին:

Տէրութեան Արքեպ. իր նոր դատական դիմումագրով կը պահանջէ որ դատարանը վճիռ մը հանէ չեղեալ համարելով իր պաշտօնանկութիւնը Երուսաղէմի Հայոց Պատրիարքական Տեղապահութենէ, եւ չեղեալ համարէ նաեւ Տ. Տիրան Արքեպ.ի Տեղապահական ընտրութիւնը:

Պատրիարքական ընտրութիւնը յաջորդ օրն իսկ հաղորդուեցաւ Երուսաղէմի կառավարիչին որպէսզի զայն ներկայացնէ Նորին Վեհափառութիւն Հիւսէյն Բ. Թագաւորին ի հաստատութիւն:

ԴԻՒԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ